ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,
Երանի քեզ, հայ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Արարատ։
Զեփյուռներով, ծաղկանց բույրով,
Ինչպես ծնող սիրագորով,
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Գեղամ սարերն ու Արագած,
Ու կարոտած աչքի նըման
Քեզ կըժպտա վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վետ-վետ,
Փայլփլում է ծըփանքներով,
Հորինում է լույսերի ծով,
Եվ մերթ վշտով ու տխրությամբ
Սևանում է, ինչպես մութ ամպ...

Հապա էն սա՛րն, էն սար հսկան,
Էն սարերի սարն ու արքան,
Լազուր երկնի ծոցը մըտած,
Ճերմակ գլուխն ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում
Քու առաջևն ու քու սրտում...
Է՛, նա արդեն քանի սև դար
Պերճ գագաթովն իր ձյունափառ
Շողշողում է, փայլատակում,
Եվ ուխտավոր հայի հոգում
Հպարտության ծնում թունդեր
Եվ սիրելի երազ՝ թե դեռ
Էն երկնահաս Մասյաց կատար,

Ուր հին տապանն առավ դադար,
Դադար կառնեն փառքերն մեր հին,
Որ նորափայլ իջնեն կըրկին...

Հենց խոնարհես աչքերըդ ցած,
Լայն դաշտի մեջ, առջևդ հանկարծ,
Մառախուղից իր խաչի հետ
Կըբարձրանա մի սուր գըմբեթ,
Որ կըխոսի մարդու հոգուն՝
– «Խաղաղութիւն ամենեցուն»...
Էնտեղ էն հին դարերից վեր,
Երկնաքարոզ, հուժկու ձայներ,
Սահակ Պարթև, Ներսես մեծին
Խաղաղությյուն քարոզեցին։
Էնտեղ լցված ահեղ հոգով,
Աստվածային իր տեսիլքով,
«Էջմիածինն ի Հօրէ»,
Որ Հայաստան լուսավորե։
Ու լույսն առան ծավալեցին
Լուսավորիչն ու մեծ Տրդատ,
Ու տակավին այնտեղ կեցած
Կըսավառնեն հոգիացած։

Սիրուն է տեսքն էն լըճակին,
Տաճարը սուրբ, լյառն ահագին,
Բայց ավելի մեծ ու շքեղ
Արծիվ հայրիկ ունենք էնտեղ,
Ճերմակահեր և հոգեհուր,
Հսկայատիպ կանգնած ամուր,
Ինչպես կաղնին Լիբանանի,
Որ հողմերին ծաղր կանի,
Էնտեղ արթուն կանգնել է նա

60 Լուսավորչի շիրմի վրրա,
Բազուկն հպարտ հենել կողքին,
Կանգնել է մեծ ու ահագին,
Ու արծրվի աչքերն հընոց
Սևեռել է կողմերն Հայոց,
65 Կողմերն Հայոց ու շատ հեռուն,
Դիտե ցրված իր ձագերուն...
Ա՜հ, ուխտավոր, աստված սիրես,
Եվ ի՛մ կողմե աջն համբուրես։